ԿԻՐԱԿԱՆ

ՄԻՔԱՅԵԼ Ճ. ՎՐԴ. ԱՋԱՊԱՀՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(21 մարտի, կիրակի)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Միաւասիկ Տէր իբրեւ զիւր եկեսցէ. եւ կառք նորա՝ իբրեւ զմրրիկ»:

«Միավասիկ Տերը գալու է ինչպես հուր. եւ իր կառքը՝ ինչպես մրրիկ» (Եսայի ԿԶ 15)

Սիրելի հավատացյալ եղբայրներ եւ քույրեր,

Երեսունհինգ օր առաջ մեկ անգամ եւս մեր կյանքում ճանապարհ ընկանք դեպի Ջատիկ, ճանապարհ ընկանք՝ մոտենալու եւ ըմբոշխնելու Քրիստոսի հրաշափառ Հարության խորհուրդը: Այդ երեսունհինգ օրերի ընթացքում մեր Սրբազան եւ Սուրբ Եկեղեցին մեզ տվեց մի քանի հանգրվաններ: Այդ հանգրվաններից մեկում մենք հիշեցինք կորուսյալ դրախտը, զգացինք նախամարդու դրախտից արտաքսման սարսուռը, մեկ այլ հանգրվանում ցնծացինք եւ ուրախացանք Աստծու ողորմությամբ, գթառատությամբ եւ բարությամբ: Մի այլ հանգրվանում հասկացանք եւ ըմբռնեցինք բարեգործության խորին իմաստն ու նշանակությունը, մեկ այլում հասկացանք, թե որքան զորավոր է աղոթքը հավատացյալի եւ մարդու կյանքում ընդհանրապես: Եվ ահա այսօր մեր Սուրբ եւ Սրբազան Եկեղեցին մեկ հանգրվան եւս է առաջարկում մեզ եւ մատուցում մեր քննությանը, մտահայեցողությանը եւ ըմբռնումին: Եվ Եկեղեցին ինչպես դարեր առաջ եւ անընդմեջ, այնպես էլ այսօր դա անում է առանց թմբկահարման, առանց ավելորդ աղմուկի, առանց ավելորդ հուզումի եւ ցնցումների, իր խաղաղության եւ հանդարտության մեջ, ինչպես վայել է Աստծու հաստատած Եկեղեցուն եւ ինչպես վայել է Քրիստոսի Մարմնին, որ է ինքը՝ Սուրբ եւ Սրբազան Եկեղեցին: Այսօր մենք՝ հավատացյալ հոտը Քրիստոսի, հավաքվել ենք մեր եկեղեցիների սրբազան կամարների տակ՝ մեկ անգամ եւս ամրապնդելու մեր հավատքը, ցույց տալու ինքներս մեզ եւ մեր նմաններին, որ հավատում ենք Քրիստոսի Հարությանը հաջորդող իրականությանը, որ է իր Երկրորդ Գալուստը՝ աշխարհի վախճանին:

Այսօր զանազան ընթերցումների մեջ մենք տեսանք, որ Աստծու Սուրբ Գիրքն աներկիմաստ ու աներկբա խոսում եւ վկայում է, թե Աստծու ստեղծած ներդաշնակությունն ի վերջո վերականգնվելու, վերահաստատվելու է, եւ այդ ներդաշնակության վերականգնումն ու վերահաստատումը չեն լինելու այլ կերպ, եթե ոչ՝ Տիրոջ Երկրորդ Գալստյամբ, որն էլ սկիզբն է լինելու Երկնքի Թագավորության՝ այս երկրի վրա: Զանազան մեջբերումների եւ զանազան

արտահայտությունների մեջ Եսայի մարգարեն, նույնիսկ Քրիստոսից դարեր առաջ, Աստվածային Հոգով, ներշնչումով ու հավատքով ակնարկել է Տիրոջ Վերջին Գալուստը՝ ասելով, թե «Տերը գալու է ինչպես՝ հուր, եւ Իր կառքը՝ ինչպես մրրիկ»:

Հուրը մշտապես ուղեկցում է Աստվածահայտնությանը: Հրի մեջ Աստված հայտնվեց Մովսեսին Սինա լեռան վրա եւ նրան տվեց Տասնաբանյա պատվիրանները: Հուրն էր ուղեկցում հրեա ժողովրդին անապատում՝ քառասուն տարվա իր թափառումների ընթացքում: Հուրը բազմաթիվ անգամներ հայտնվեց Հին Կտակարանի Սրբերին՝ Դավթին, Սողոմոնին, Եղիային եւ այլոց՝ ցույց տալու համար Աստծու ներկայությունը եւ Աստծու մոտիկությունը: Այդ իսկ պատճառով է, որ Եսայի մարգարեն, Տիրոջ հրաշափառ Գալուստը ներկայացնելով իբրեւ Աստվածահայտնության շարունակություն, այն պատկերում է հրի եւ մրրկի տեսքով:

Նոր Կտակարանը եւ Ինքը Քրիստոս շարունակում են այս մոտեցումը եւ ցույց տալիս, որ հենց Ինքն է Նա, որ վերադառնալու է որպես Տեր եւ Թագավոր: Սակայն Իր՝ Մարդու Որդու նշանն է, որ նախ երեւալու է երկնքում՝ որպես Երկրորդ Գալստյան նախանշան:

Թե՝ Հին Կտակարանում եւ թե՝ Նոր Կտակարանում Տիրոջ հրաշափառ Երկրորդ Գալստյան խորհուրդը կապված է երկու հստակ եւ անուրանալի իրողությունների հետ. առաջինը սարսռացուցիչ դատապարտությունն է, իսկ երկրորդը՝ փրկության ցնծությունը: Քրիստոսի Երկրորդ Գալուստը դարձյալ մեկ անգամ եւս շեշտելու է Գալստյան հետ կապված այս երկու իրողությունները, որ են՝ մի կողմից դատապարտություն մեղավորաց, եւ մյուս կողմից՝ փրկություն արդարոց: Եվ եթե Հին Կտակարանում շեշտվում, ընդգծվում, առավել իմաստ ու բովանդակություն է ստանում դատապարտությունը, ապա Նոր Կտակարանը մեզ ցույց է տալիս փրկության հույսն ու ավետիսը, ավելի շեշտադրում, ընդգծում, մեր հոգուն ու մտքին հասանելի դարձնում փրկության լուսաբեր ու լուսարար ավետիսը: Այդ իսկ պատճառով էլ Քրիստոսի Եկեղեցին Քրիստոսի Երկրորդ Գալստյան հետեւում տեսնում է իր նմանների՝ Քրիստոսի կողմից հաստատված Եկեղեցու հավատացյալների փրկությունը: Եվ չի մտածում սոսկ դատապարտության եւ կործանման մասին, այլ նախ եւ առաջ մտածում է փրկության, հավիտենական կյանքի, Երկնքի Արքայության հաստատման մասին: Ուստի մեկ անգամ եւս երբ հավաքվել ենք այսօր մեր Եկեղեցու սրբազան կամարների տակ՝ ցույց տալու մեր հավատքը, ամրակուռ եւ հաստատուն հավատքը Քրիստոսի Երկրորդ Գալստյան նկատմամբ, պետք է մեր հոգիներից ու սրտերից ներս տեսնենք այս երկու իրականությունները եւ փորձենք խուսափել առաջինից եւ ընդմիշտ փարվենք երկրորդին, խուսափենք մարդկային դատապարտությունից, որ անխուսափելիորեն ի վերջո իրականանալու է այս աշխարհում, եւ փարվենք փրկությանը, որը նույնքան ակնառու է, նույնքան իրական՝ Քրիստոսի մշտափառ Հարության լույսի ներքո:

Այսօր, սիրելի հավատացյալ եղբայրներ եւ քույրեր, մենք գտնվում ենք հերթական հազարամյակի ավարտին: Այս հազարամյակում վերջին անգամն է մեր Եկեղեցին մեզ հրավիրում խոկալու եւ խորհելու Քրիստոսի Երկրորդ Գալստյան իրողության եւ իրականության շուրջ: Եվ եթե մի պահ դուրս նայենք

մեր Եկեղեցուց, փորձենք մեր Հայաստան աշխարհի տարածքի վրա տեսնել իրականություններն ու իրողություններն այն լույսի տակ, ուր դրանք պարզ երեւում են, կտեսնենք, որ այս հազարամյակի ավարտին մեր ժողովուրդը կարծես թե բաժանվել է մի քանի մասերի:

Ոմանք, Ավետարանով եւ առանց Ավետարանի, մաթեմատիկական զանազան հաշվարկներով, աստղագիտական զանազան պարզաբանումներով, բնական երեւույթների զանազան վերլուծումներով իրենց եռանդն են վատնում եւ փորձում ճշտել Քրիստոսի Երկրորդ Գալստյան ժամանակն ու տեղը: Ինչպես հազար տարի առաջ, այնպես էլ այսօր կան մարդիկ, ովքեր շահարկում են Քրիստոսի Երկրորդ Գալստյան իրողությունը եւ իրենց մարդկային պարզ մտածումը, մարդկային պարզ բանականությունը փորձում են վերագրել Աստվածային իմաստությանը, փորձում են իրենց ժամանակային հաշվարկները պարտագրել այդ ժամանակն ստեղծող Աստծուն՝ մոռանալով, որ անժամանակային Աստծու համար հազար տարին մեկ օրվա նման է, եւ մեկ օրը՝ հազար տարվա պես: Բնական երեւույթների հետեւից գնալով, զանազան աստղագիտական հաշվարկների մեջ մտնելով, մի՞թե մեր եղբայրներն ու քույրերը չեն ընկնում այն աշխարհական հոգսերի մեջ, որոնցից մեզ այսօր Ավետարանն զգուշացնում է հեռու մնալ: Մինչ մարդու համար կարեւորը ոչ թե հաշվարկներ կատարելով Քրիստոսի Երկրորդ Գալստյան տեղն ու ժամանակն իմանալն է, այլ այդ Երկրորդ Գալստյանը մշտապես եւ մշտարթուն կերպով պատրաստ լինելը:

Ժողովրդի մեկ այլ հատված անտարբերության եւ անհոգության մեջ քմծիծաղ է տալիս այն մյուս հատվածին, որ 1999 թվականը եւ 2000 թվականի արշալույսը տեսնում է որպես Քրիստոսի Երկրորդ Գալստյան մոտալուտ արտահայտություն: Այս մյուս հատվածը քմծիծաղով է մոտենում, արհամարհում է մյուսներին եւ իր սրտի ու հոգու խորքում փորձում է իրեն համոզել, թե ինչպես որ առ այսօր չի եկել Քրիստոս, այդպես էլ չի գալու, եւ Երկրորդ Գալուստը չի լինելու: Մարդկային այս հատվածը մշտապես ուղեկցել է Քրիստոսի Սուրբ Եկեղեցուն: Եթե թերթենք Պետրոս Առաքյալի Երկրորդ նամակը, կտեսնենք, որ այն ինքնին ուղղված է այնպիսիների դեմ, ովքեր իրենց սնապարծության միջից փորձում էին հավակնել, իրենք իրենց եւ դիմացինին համոզել, որ Քրիստոսի Երկրորդ Գալուստը սոսկ առասպել է, այլ ոչ թե գալիք իրականություն:

Մեր ժողովրդի մեջ կա նաեւ մեկ այլ հատված, որ ընդհանրապես ո՛չ ասելիք ունի եւ ո՛չ անելիք՝ Քրիստոսի Երկրորդ Գալստյան հետ կապված, բնավ հետաքրքրված չէ Գալստյան ո՛չ ժամանակով, ո՛չ տեղով, բնավ հետաքրքրված չէ այդ ամենով:

Արդ, ու՞ր է իրական քրիստոնյայի տեղը եւ դերը, ո՞ւր է մեր Եկեղեցու ճշմարիտ հավատացյալի տեղն այս ամենի մեջ: Արդյո՞ք մեր Եկեղեցու ճշմարիտ հետեւորդն ու հավատացյալը պետք է ընկնի հաշվարկների մեջ, թե՞ արհամարհանքով ու անտարբերությամբ պետք է մոտենա Քրիստոսի Երկրորդ Գալստյան խորհրդին: Պատասխանն արդեն երկու հազար տարի տրվում, տրվել եւ տրվելու է մեր եկեղեցիներում. Քրիստոսի ճշմարիտ հավատացյալը ո՛չ հաշվարկների կարիք ունի, ո՛չ ճշտելու Քրիստոսի Գալստյան տեղն ու

ժամանակը եւ ո՛չ էլ կարող է մոռանալ այդ մասին: Իսկական, ճշմարիտ քրիստոնյան, ճշմարիտ ուղղափառ հավատացյալն ամեն որպէ եւ ամեն վայրկյան պատրաստ է Քրիստոսի երկրորդ Գալստյանը: Ճշմարիտ քրիստոնյաներին չեն հետաքրքրում բնության երեւույթները, մասնագիտական հաշվարկները, մյուս մարդկանց վերաբերմունքը Քրիստոսի երկրորդ Գալստյան նկատմամբ, այլ նրանք գիտեն, համոզված են, որ դա իրականություն է, որովհետեւ Քրիստոս Ինքը խոստացավ վերադառնալ: Ուստի իրական, ճշմարիտ հավատացյալն ամեն վայրկյան ու ամեն պահ պատրաստ է դիմավորել Քրիստոսին՝ ասելով. «Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն»:

Քրիստոսի եկեղեցու համար, ինչպես Աստծու համար, չկա անցյալ եւ չկա ապագա: Եկեղեցու համար ո՛չ անցյալն է անցած, ո՛չ էլ ապագան՝ չկայացած: Ինչպես ամեն անգամ Սուրբ Պատարագի խորհրդով Քրիստոսի խաչելության եւ հարության հիշատակությամբ մենք ներկա ենք դարձնում Քրիստոսի խաչելությունն ու հարությունը, ապրում Քրիստոսի խաչելությամբ եւ հարությամբ՝ այն մշտապես ներկա դարձնելով մեր կյանքում, այնպես էլ իրական եւ ճշմարիտ քրիստոնյան ապագան նույնպես ներկա է դարձնում իր կյանքում: Այդ ապագան սեփական կյանքում ներկա դարձնելը հենց այն նպատակն ու ուղղվածությունն ունի, շնորհիվ որի ամեն վայրկյան եւ ամեն պահ պատրաստ է դիմավորել մեր Տիրոջն ու Փրկչին:

Այո, վերջանում է այս հազարամյակը, սիրելի հավատացյալ եղբայրներ եւ քույրեր, եւ մենք պատրաստվում ենք դիմավորել նոր հազարամյակ: Սակայն ո՛չ հին հազարամյակի ավարտը, ո՛չ էլ նորի սկիզբը մեզ չպետք է մղեն փորձելու զանազան ձեւերով մոտենալ Քրիստոսի երկրորդ Գալստյան խորհրդին, այլ, Քրիստոսի լուսավոր եւ լուսաբեր պատգամների հիման վրա ապրելով, ամեն որպէ եւ ամեն վայրկյան Քրիստոսի երկրորդ Գալստյանն սպասելով, պետք է փորձենք լուսավորել եւ լուսավոր պահել Քրիստոսի լույսն այս աշխարհի վրա, որովհետեւ յուրաքանչյուր քրիստոնյա հավատացյալ նաեւ իր բաժինն ու մասնակցությունն ունի Քրիստոսի երկրորդ Գալստյան մոտալուտ խորհրդի մեջ՝ աղոթքով, քարոզչությամբ եւ ապաշխարությամբ:

Այդ է պատճառը, որ մեր եկեղեցու եռամեծ Հայրապետները Գալստյան խորհուրդը բերել եւ կապել են քառասնօրյա ապաշխարության շրջանին, որպեսզի ինչպես որ մորմոքվում ենք կորուսյալ դրախտի հիշատակով, այնպես էլ ցնծանք եւ բերկրենք երկրորդ Գալստյան լուսավոր սպասումով, հավատքով եւ հույսով: Մեծի Պահոց այս վերջին կիրակի օրը յուրաքանչյուր քրիստոնյա հավատացյալ պարտ է իր հոգու եւ մտքի խորքում մեկ անգամ եւս վերարթնացնել ու վերանորոգել Քրիստոսի երկրորդ Գալստյան հույսն ու խորհուրդը, որպեսզի երբ էլ դա տեղի ունենա՝ այսօր, վաղը կամ հարյուրամյակներ հետո, մշտապես եկեղեցու մեջ լինեն պատրաստ, նվիրված, գիտակից անձնավորություններ, ովքեր կկարողանան ճիշտ ժամանակին իրենց սիրտն ու հոգին բացել Տիրոջ առջեւ եւ բացականչել. «Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն, օրհնեալ, որ գալոցդ ես», ամեն: